Միայն ներկա պահին ձեր գործադրած ջանքերից է կախված մարդկության ապագան
Սանատ Կումարա 20 հունիսի 2017 թվական

ԵՍ Սանատ Կումարան ԵՄ: Ես եկել եմ: Որքան էլ դժվար լինեն հանգամանքները մոլորակի վրա, Մենք շտապում ենք ձեզ օգնության: Եվ մեր յուրաքանչյուր հանդիպման ժամանակ մենք մեկնում ենք Մեր օգնության ձեռքը: Անփոփոխ: Մշտապես: Աշխարհների միջով:

Այսօր Ես եկել եմ՝ պատասխանելու այն հարցին, որը ձեզանից շատերը տալիս են մտովի կամ բարձրաձայն: Այս հարցը բառացիորեն օդում կախված է մոլորակի վրա: Եվ այս հարցն է. «Ինչ անել: Արդյո՞ք կա որևէ ելք այն փակուղուց, որում հիմա հայտնվել է մարդկությունը»: Սիրելիներս, Ես չեմ հոգնում կրկնել, որ ցանկացած իրավիճակից միշտ կա Աստվածային ելք, և ցանկացած խնդրի համար կա Աստվածային լուծում: Եվ եթե չլիներ այդ ելքը և այդ լուծումը, ապա Մենք այնքան ուժ ու էներգիա չէինք վատնի, որպեսզի գայինք ու ձեզ հասցնեինք Մեր Խոսքերը:

Այժմ Ես ուզում եմ ձեզ հիշեցնել այն մասին, որ ներկայումս Երկրի վրա մարմնավորված է լուսակիրների աննախադեպ քանակ: Մարմնավորված լուսակիրներից 144 000-ը իրենց ներուժով պատրաստ են հասնելու Քրիստոսագիտակցության մակարդակին: Իսկ դուք գիտեք, որ դա մարդկային գիտակցության զարգացման այն մակարդակն է, որի դեպքում հնարավոր է մարդկանց միավորումը հնարավոր ամենաբարձր մակարդակով: Ըստ էության, գիտակցության այս մակարդակը առավելագույնս մոտեցված է Համբարձված Բազմություններին: Գիտակցության այս մակարդակում հնարավոր է լուսակիրների ճշմարիտ միավորումը Հոգով: Սա Սուրբ Հոգու Համայնքի գիտակցության մակարդակն է: Սա Երկրի վրա Լույսի Եղբայրության գիտակցության մակարդակն է: Եվ դա այն մակարդակն է, որին անհրաժեշտ է հասնել: Հենց որ 144 000 լուսակիրներ հասնեն Քրիստոսի գիտակցության մակարդակին և միավորվեն հոգևոր Եղբայրության մեջ Երկրի վրա, իրավիճակը մոլորակի վրա կփոխվի գրեթե ակնթարթորեն:

Ինչո՞ւ մինչև հիմա դա տեղի չի ունենում: Ինչո՞ւ լուսակիրները չեն կարողանում միավորվել: Ես կարող եմ ձեզ պատասխանել այս հարցին: Ամբողջ բանը հենց ձեր մեջ է: Երբ Միասնության, Եղբայրության և Սիրո Հոգին ծլարձակում է ձեր սրտերում, դուք ձեր գիտակցության մեջ բարձրանում եք մինչև Քրիստոսագիտակցության մակարդակ: Ձեզանից յուրաքանչյուրն ունեցել է պայծառատեսության, ներքին երջանկության և Ուրախության նման րոպեներ: Սակայն խնդիրը կայանում է նրանում, որպեսզի պահպանեք գիտակցության նման վիճակը հնարավորինս երկար ժամանակ: Սկզբում՝ մեկ ժամվա ընթացքում, հետո՝ մեկ օրվա, հետո՝ շաբաթվա, ամսվա, տարվա: Եվ կգա պահը, երբ գիտակցության այս մակարդակը ձեզ համար բնական կլինի, և դուք չեք ցանկանա բաժանվել դրանից ոչ մի պատրվակով: Աշխարհի ոչ մի գայթակղություն ի վիճակի չի լինի ձեզ շեղել Աստվածային ներքին Ուղուց: Իսկ հիմա եկեք միասին մտածենք. ինչո՞ւ, չնայած բոլոր ջանքերին, չի հաջողվում պահպանել գիտակցության բարձր

մակարդակը: Կան ուժեր, որոնք գործում են աշխարհում: Մենք դրանք անվանում ենք Մեզ հակադրվող ուժեր: Եվ այդ ուժերի խնդիրն է՝ թույլ չտալ մարդկության անցումը էվոլյուցիոն զարգացման նոր մակարդակի: Այդ ուժերը գործում են ինչպես ձեր ներսից, այնպես էլ դրսից: Ուստի, սիրելինե՛րս, դժվար է ոչ միայն պահպանվել գիտակցության արժանի մակարդակում, այլև նույնիսկ հասնել դրան կարճ ժամանակահատվածով: Ո՞րն է ելքը: Միայն ամենօրյա գիտակցված ջանքեր՝ դեպի Աստված առաջ շարժվելու համար: Միայն համառություն: Միայն նվիրվածություն Աստծո Կամքին: Դուք պետք է հստակ գիտակցեք, որ միայն ներկա պահին ձեր գործադրած ջանքերից է կախված մարդկության ապագան:

Պետք է միավորվել մաքրության և նվիրվածության սպիտակ-երկնագույն դրոշի ներքո: Բոլոր լուսակիրներին: Հիշե՛ք. միավորվելու, փոխգործակցելու ունակությունը Քրիստոսի գիտակցության աճի նշան է:

Զրհոսի Դարաշրջանի էներգիաները համագործակցության, փոխգործակցության էներգիաներ են: Հետևաբար, այն ամենը, ինչ հակազդում է Նոր Դարաշրջանի էներգիաներին, կսրբվի-կտարվի: Դա անխուսափելի գործընթաց է: Դրա համար էլ ձեզ տրվում է ընտրության մասին Ուսմունքը: Դուք ինքներդ եք ընտրում՝ հետևել էվոլյուցիայի Ուղուն, թե՞ անցյալ տարվա սաղարթի պես հոսել դեպի անէություն: Սա ձեր ընտրությունն է: Եվ սա ձեր պատասխանատվությունն է: Աստված կարող է բացարձակապես ամեն ինչ: Բայց Նա չի կարող միջամտել ձեր ազատ կամքին: Եվ եթե դուք ձեր ազատ կամքով որոշել եք գնալ դեպի անդունդ տանող ճանապարհով, դա ձեր ընտրությունն է և ձեր պատասխանատվությունը:

Ընդամենը 144 000 լուսակիրներ, որոնք արդեն մարմնավորված են և ի վիճակի են պահպանել Քրիստոսի գիտակցությունը, կփոխեն աշխարհը: Այս տողերն ընթերցողների ճնշող մեծամասնությունը Քրիստոսաէակ դառնալու ներուժ ունի: Կա ծրագիր, և կա շարժման ուղղություն: Ամեն օր հիշեցրեք ինքներդ ձեզ և ձեր կողքին գտնվող բոլոր մարդկանց՝ գիտակցության հնարավորինս բարձր մակարդակ պահպանելու անհրաժեշտության մասին: Ամեն օր միավորվեք մաքրության և բարոյականության, Աստծո Կամքին նվիրվածության և դեպի լուսավոր ապագա ձգտման սպիտակ-երկնագույն դրոշի ներքո: Ես ձեզ հաջողություն եմ մաղթում դեպի Հավերժություն տանող ձեր Ուղու վրա:

ԵՍ Սանատ Կումարան ԵՄ:

Օմ: